ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12-ը սեպտեմբերի 2019թ.
ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ՋՈՒ ԻԶ վարչության Ս բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան,
Բացակայում է ՀՀ ՋՈՒ ԻԶ վարչության Ս բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:
Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյանը (ԳԱՊ),

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Հանձնաժողովի նիստը նախագահող ընտրելու մասին.
2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հանձնաժողովի նիստը նախագահող ընտրելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Հանձնաժողովի նիստը նախագահող ընտրել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Տ. Գասպարյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Գ.Տերյան)

2.1 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մասնակիցների առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 12.09.2019թ. ժամը 12^{00}-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ վարվել են միաժամանակյա բանակցություններ: Բանակցությունների արդյունքում «Սպեցմաշ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար առաջարկել է 27 348 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, «ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ն չի նվազեցրել գինը, իսկ «ՖՈՐ ԴԻՐԵՔՇՆՍ ՄՈԹՈՐՍ» ՓԲԸ-ն և «Յեպելին Արմենիա» ՍՊԸ-ն չեն ներկայացել բանակցություններին:

2.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սպեցմաշ» ՍՊԸ-ն:

2.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

2.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Տ. Գասպարյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Ա. Մուրադյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան